Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ հոդվածներով, 234.12-րդ հոդվածի 1-ին մասով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. Աննա Հայրապետի Աղաջանյանի հայցն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ Երևանի քաղաքապետարանի և «Աննա Աղաջանյան Հայրապետի» Ա/Ձ-ի միջև կնքված ԵՔ-ԷԱՃԾՁԲ-23/38-1 ծածկագրով պայմանագիրը միակողմանի /մասնակի/ լուծելու մասին Երևանի քաղաքապետարանի որոշումը առոչինչ, ոչ իրավաչափ ճանաչելու պահանջով և որպես հետևանք նաև «Աննա Աղաջանյան Հայրապետի» Ա/Ձ-ի վերաբերյալ Երևանի քաղաքապետի 15.12.2023թ. «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին» հ.4132-Ա որոշումը առոչինչ, ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին, մերժել:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան դատարանի 07.02.2024 թվականի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից վերացնել:

4. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ**